



ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔԵԱՆ

ԵՒ ՆՐԱ «ԼԱՆՈՒԱՐԻ ՈՐՍԸ»

Վահան Միրաքեան, խաշնարած եւ երկրագործ գիւղացու զաւակ, ծնուել է 1868 թուին Շուշաէր գիւղում, որ գտնվում է Բօրչալուի դաւառում, Գուգարքի կողմը, Թիֆլիսից հարաւ-արեւմուտ՝ վաթսուն վերստ հեռաւորութեան վրայ։ Սկզբնական մասնաւոր դրագիտութիւնը ստանում է ծննդավայրի ծխական դպրոցում, մի-մի տարի ուսանում է Թիֆլիսի քաղաքական եւ տեխնիքական ուսումնարաններում, ապա 1886 թուին, կիսատ ուսումով, անցնում է Գորու Անդրկովկասեան ուսուցչական վարժարանը, երեք տարուց 1889 թ. աւարտելով ուսումը՝ ուսուցչական պաշտօններ է վարում Ջալալօղլի, Շուշաէր, վերակացու էլ միաժամին Գէորգեան շեմարանում, բայց ծագած ինքնիզաների պատճառով հեռանում է աշխատելից երկու տարի ժամանակով Նուխի, իսկ ներկայումս դեռ շարունակում է վարժապետութիւն անել դարձեալ Շուշաւէրում։ Դեռ ուսանող 15 տարեկան հասակից նա սկսում է ոսանաւորներ գրել։ Աշխատակցել է «Աղբիւր-Տարազ», «Մուրճ» հանդէսներին եւ Գորուց թղթակցել է «Նոր-Դար»ին։ 1897 թ. «Միւր-Կօնօ» ստորագրութեամբ լոյս է տեսնում «Առանց լարերի» հատ ու կտոր ոսանաւորների ժողովածուն։ Սա առաջին փորձն է, հեղինակի խակ մօքի պտուղը, որի վախճանը՝ գրական ոչ մի արժանաւորութիւն ներկայացնելով՝ պիտի լինի շուտ մոռացութիւնը եւ ընկերական նեղ շրջա-

նուսմ կարգացուելուց յետոյ դատապարտուելու է զգրոցուս կողպուելու ։
 Բայց բանաստեղծին հետաքրքրել է մի այլ գեղեցիկ սէր — բնութեան
 սէրը ։ Երեխայութիւնից նա միշտ անհանդիսա զրութեան մէջ է եղել ,
 սիրել է միայնութիւնը եւ այդ առանձնութեան մէջ , անձնատուր եւ
 յափշտակուած իր խոհերի , զգացումների ու արամազրութիւնների թեւ
 լաղրման , միշտ ձգտել , սիրել է բնութիւնը եւ նրա խորհրդաւոր զըր-
 կուսմ շնչել , ապրել է գեղեցիկ տեսարանների հրաշալիքներով ։ Եւ նա
 ո՛րքան սիրում էր գարնանը սարի բարձրութիւնից նայել կանաչ արւ-
 տերին եւ արածելիս ոչխարի հօտերին գաշաբուսմ փռուած ։ Բնական
 ձգտումը դէպի միայնութեան դիմելը , այնքան թափառելը եւ ուշ գիշեր-
 ներով տուն վերադառնալը առիթ էին տալիս ծնողներին եւ մերձաւոր հա-
 թեւաններին խնեթ կարծելու նրան , հնար են մտածում այդ աննօրմայ
 զրութիւնից ազատելու ։ Մածուկ դիմում են մօլոյսի խորհրդի եւ ինչ որ
 ցուր են խմայնում իբր բծկելու նպատակով , սակայն ի՞նչ կարող էին
 հասկանալ , թէ երեխայի սրտում այդ միջոցին սկսել է կամաց բողբոջել
 բանաստեղծական մատաղ ծիւրը դէպի գեղարուեստական աշխարհի սիրու-
 նատեսութիւնը , վսեմութիւնը , նրան տանջելիս է եղել մի ինչ որ տեն-
 դային կրակ , մի ներքին ոյժ , շարունակ քաշել-քաշելով բնութեան
 ծոցը ։ Այդ երկնային հուրն է , որ մագնիսացրած , համակելով բանաս-
 տեղծի ամբողջ էութիւնը՝ առաջ բորբոքում է մանր կայծերով եւ նրա
 նուսմ ասպարէզ է դուրս բերում ստեղծագործական ոյժի հրաբուխ , որը
 սակայն չունենալով ելական լայն բացուածք՝ տեղ-տեղ թոյլ փափստոց-
 ներ է արտալիծում , — զրանք միայն այն մանր մուներ ռաւանաւորների
 արդիւնքներն են , որ տեղի ունեցան արտայայտման խակ ժամանակ
 («Առանց լաբերի») , մինչեւ որ այդ հրաբուխը յանկարծ բողբոջուելով
 լայն բերան բացեց մեծ ոյժի մղումով եւ արտալիծեց միջից առատ ջրան ,
 այսինքն «Լալուարի որսը» , Այդ պօզմայի ծննդարեութեան բուն ար-
 մատը որոնելու է բանաստեղծի մտնկական յիշողութիւնների մէջ եւ
 անձնական շօշափած բնութեան գրկի այն քաղցրութիւններն ու ապա-
 ւորութիւնները , ինչ որ անցել են նրա սրտով , երակներով , արիւնով
 . . . ։ Այո՛ , բանաստեղծի գիշեր ցերեկ մտածածը եւ տանջածը եղել
 է գլխաւորապէս եւ այն , թէ ինչպէս կարողանայ իր զղացածը հաղոր-
 դակից անել եւ ուրիշներին եւ նոյնը անկեղծութեամբ զգալ տալ
 նրանց ։ Բանաստեղծին միայն պակասում էր լեզուի ճոխութեան պա-
 շար , իսկ նա այնքան էր ջերմ փայփայտած գէպ՝ իր սիրած առարկան ,
 որ հասունացած զղացմունքները յորդանալով՝ նրա համար դռնիւր բա-
 ցին եւ լեզու տուին ։ Ութ տարուայ աշխատանքի գործ է «Լալուարի
 որսը» , նախ մի քանի արտազրութիւններով , ցրտած ռաւանաւորներով ,
 մինչեւ որ մշակվում է հասունանալով ամբողջական՝ հրատարակուելով
 1901 թ. «Որսճում» , յետոյ՝ առանձին զրթոյկով , 40 կողմէկ արժողու-

Թեամբ: Մի ամբողջ տարի անցած, այս գրքի մասին քննադատութիւն չ'երեւաց, միայն պ. Ս. Մանգինեանը մի գեղեցիկ ընդարձակ յօդուած նուիրեց «Տարազ»-ում (1902 թ. N⁰ 46 եւ 47): Բաւական կանգ առնելով լեզուական օրէնքների վրայ պ. Մանգինեանը առաջարկում է հալել, սահել, կոթել, կոխել, կրել բառերի արմատների գործածութիւնը ժողովրդական դարձուածքներում: Մինչդեռ ժողովրդական լեզուի հարգատուութեան գաղափարը պաշտպանող մեր միւս մեծամիտ քննադատները, առանց խղճահարուելու, գործ են ածում օտար եւրոպական բառեր եւ իրենց դանդաղ, անգոյն լեզուով, մեռած ոճով եւ մուծ խորատւոր տարալայտութիւններով հակառակ օրինակ հանդիսանում, այո՛, նրանք անգիտութեամբ գեհնական խրթնաբանութիւններ ու դժուարութիւններ են ներկայացնում լեզուական խնդիրներում: Այդ առիթով պ. Մանգինեանը գրել է, բացի «Լալուարի որսի» քննադատութիւնից, երկու ընդարձակ լեզուաբանական եւ ուղղագրական յօդուած՝ «Թարգմանութեան ծաղիկները» (1902 թ. 1 եւ 2 «Լուսաշ»-ում) եւ «Յաւելրժահար»ի թարգմանութիւնը «Արարատ»ի 5, 6 եւ 7 համարներում, որ խորհուրդ ենք տալիս ընթերցողներին կարդալ:

Այո՛, խորհուրդ կը տանք ըլսորովին խոյս տալ օտարաբանութիւններից, եթէ հետեւենք մեր «կաղապարային քննադատներին», հաւատացէ՛ք, բարեկոնեան լեզուների խառնակութիւնների հետ միասին մըլացնելու ենք գրականութեան մէջ չինական ուղղագրութիւններ, որոնցով լի առատ է մեր գրուածքների մեծ մասը: Լաւ կանէին եթէ նախ իրենք զտէին, մաքրէին, պարզէին ու հասկանալի դարձնէին իրենց սեփական աղաւաղ լեզուի ձեւերը, ապա թէ հրապարակ ելնելու եւ դառ տալու ուրիշներին իրաւունք համարէին: Այս էլ պէտք է ասեմ, որ եթէ ամէն մի հեղինակ իր բնագաւառի ոճն ու լեզուն անխնայ մօցնել աշխատէ, ի՞նչ կը լինէր այն ժամանակ գրական հրապարակի վիճակը: Ես չեմ ժխտում, որ դարերի ընթացքում լեզուի ստեղծիչն ինքը՝ ժողովուրդն է եւ մանաւանդ նշանակութիւն ունի այն գրուածքը, եթէ նա գրուած է ինքում ժողովրդական մասշեղի լեզուով եւ շատ տարածուած է նրա խաւերում: Ասելս այն է, որ պէտք է ընտրովի լինի գործածութիւնը եւ ո՛չ անխորի, եւ ընտրել գլխաւորապէս այն բառերը, որոնք միջոցներ եւ յարմարութիւններ ցոյց կը տան գրական ոճի հետ եւ ընդհանրութեան միշտ սեփականութիւն գաղափար կուսնեն: Ապա թէ ոչ՝ Պ. Պոստեանը կաշխատէ մօցնել Աշտարակի բարբառը, Ղ. Աղայեանը Բօլնիս-Արշէնի, Յովհ. Թումանեանը Լոռու, Վ. Միրաքեանը Շուշուէրի եւ այսպէս ամէն մի հեղինակ իր բնագաւառի, յետոյ գիտէք ի՞նչ կըստացուի — խառնիճազանճութեան մի զանգուած, մի քառս, մի խառնուրդ կամ աջապ-սանդղալ մի երեւուն, ձգձգուն լեզուի: Ժողովրդական բառերի խնամքով ընտրութեան գործը պէտք է յանձնել հմուտ

ու ձեռնհաս գրագէտ-բանասէրներէ ձեռքը՝ զանազան գաւառաբարբառ-ներն ապագայ լուրջ ուսումնասիրութեան համար եւ ոչ կամայականներն, որ աւելի քանդելու են քաջ, քան շինելու : Փոխանակ աշխատելու օտար եւ Եւրոպական բառերից մեր գրականութիւնը մաքրելու եւ իրենց լեզուի գլխաւորապէս ուղղելու գործը թողած, զարմանում եմ, զանը-վում են դեռ մարդիկ, որ ուրիշների գլխին անկոչ հիւրի պէս հանդի-սանում են բարբարոսական լեզուի հարստահարիչներ-լեզուազարներ... :

Մեր գրողներից մանաւանդ թարգմանիչներէ մի քանիսն էլ, զըծ-բաղդաբար, հայագգեստ տառերով ներմուծութիւններ են անում եւրո-պականացրած բառեր : շատերից մի օրինակ բերինք « Մշակ » ի (1897, N 133) « Նամակ Պարսկաստանից » խորագրով մի յօդուածից : « Մի քանի ժամանակ առաջ Պարսկաստան եկան՝ ինժեներ Փալաղինի, Իսալիայի Միլան քաղաքի պօլիտեխնիկական ինստիտուտի ջրաբաշխութեան, եւ նոյն ինստիտուտի ուսումնաւարտ աշակերտ ինժեներ Ժ. Կաստալատի, Ուրմիայի լիճը հետազօտելու պաշտօնով » : Մի՞թէ հայերէն չէ կարելի գրել « Երկրաշափ ճարտարապետ Փալաղինի... բազմաբուսական վար-ժոցի՝ ջրաբաշխութեան ուսուցիչ » եւ այլն : Հ. Առաքելեանի այս գրու-թեան վրայ, եթէ չեմ սխալվում, « Բազմալէպ » ի համարներից մէկում սոյն նկատողութիւնը եւս արած պիտի լինի ծանօթ գրագէտ բարեկամս՝ Վենետիկի Միսթարեան անդամներից մէկը՝ արժ. Հ. Աթանաս Տիրօյեան : Այդ տեսակ բառեր եւ նախադասութիւններ կարելի է միշտ գտնել Տ. Յովհաննիսեանի, Ս. Մալխաթեանի, Ս. Լիսիցեանի թարգմանական գրուածքներում : Եթէ այդ գրողները այդպէս դիտեն վարուել լեզուա-կան օրէնքների հետ, ապա ի՞նչ կարելի է պահանջել տափակութիւն-ներից կամ միջակ գրիչներից (1) :

Իսկ միայն երեւակայութեան մէջ նրբութիւններ սիրող մեր հայա-գէտներից ոմանք այնպէս կարծում են հակառակը, թէ զարգացած գրա-կան ոճը դարձնելով ասիականի՝ ժողովրդական լեզուի հարազատութիւն կը ստեղծուի : Վալուարի որսի գեղեցկութիւնը նախ եւ առաջ քղիւում է լեզուի հարազատութիւնից... » : Պ. Մանգրինեանը օրինակներ է առաջ բերում հալ, սահ, կոխ, կրք, կիր արմատական բառերը, որոնց գոր-ծածութիւնը իրաւամբ հրաշայի բան կը լինի, իսկ ի՞նչ կասէ այն բա-ռերի համար, որ յաճախ պատահում են « Վալուարի որս »-ում եւ ո՛չ հա-յերէն, օրինակ. աշաշխի, չաքան, աղաշուրի, դագա, նաւադ, օրա,

(1) Բացառիկ դէպքում, այն էլ խիստ ժխտութեամբ եւ խնայու-ղութեամբ, պիտի գործածել եւրոպականացրած բառեր, որոնց չգործա-ծելուց եթէ խանգարվում է գլխաւոր իմաստը՝ դէմը չունենալով նոյ-նանիչ հայերէնը, մինչեւ որ ապագայում կը ձուլուին յարմարները :

գաղա, բուլա, ախալ, հալաւա, սիւրազ, ուրկուն, օրիւկ, մեհօհսալ (1) եւայլն, եւ մօտ ծանօթութիւն ունենալով տեղական հանգամանքների, ժողովրդական գաւառաբարբառների գործածական եղանակների մասին, պէտք է ասեմ, որ դրանք թրքական ծագում ունեցող բառեր են, պէտք է մտածել այդ բառերի իսկական լաւագոյնները փնտռել հայերէնում, ապա թէ ոչ՝ կենդանի լեզուն, որ քերականական կանոնները ճշտութեամբ պիտի տիրապետող դեր կատարէ, ապագայում կը ներկայացնէ այլասերուած խառնակ ու մութ լեզուների մի անորոշ զրութիւն: Գրեւնադաւաններից շատերը երբեմն չեղելով ճանապարհը թողն են տալիս առաջարկելու ուղղագրական եւ այնպիսի պայմաններ, որ թէ՛ իրագործելու համար դժուարին եւ թէ՛ դէմ են կանոնաւոր յեղափոխական ժամանակակից օրէնքներին, եւ քերականական ամենատարբական պահանջներին:

Եթէ ստիպուած եղայ լեզուական խնդիրների մասին այսքան երկար կանգ առնելու, այդ այն պատճառով է, որ պ. Մանգլինեանը լեզուի խնդիրը լուրջ շօշափելով, իր մասենախօսական բաժնի մեծ մասը այդ ճիւղին է յատկացրել: Այո՛, լաւ բանառաւոր լինելու համար լաւ լեզու գիտենալ է հարկաւոր, որովհետեւ լեզուն է այն գլխաւոր հիմքը, այն փորձաքարը, որի վրայ քարծրացնում են չէնքը, եթէ հիմքը խախտու է, չէնքը փլուելու է, որքան էլ վերջինս զեղեցիկ կերպով կանգնեցրած լինի: Ուրեմն լաւ ճաշակ, քնքոյշ երաժշտական լսողութիւն պէտք է լեզուի տրամաբանական երեւոյթների վրայ ստանձնաւ պէս աչք դարձնելու:

«Լալուարի որսը», ուղիղն ասած, գեղեցիկ կերպով կարող է համեմատուել Յովհ. Թումանյանի «Հօսեցի Սաքօ» եւ «Անոյշ» պոէմաների հետ: Երկուսն էլ ժողովրդական բանաստեղծներ են, երկուսի ստեղծագործական բնաւորութիւնը վիպական է, երկուսն էլ նիւթ են վերցնում բոմանտիկական դիւցաղներգութիւնների մէջ, մինը միւսին լրացնող եւ մէկը արդէն սկսող, միւսը նոր ուս դնող մուսաների աշխարհում: Մանաւանդ նրանք փոխադարձ հասարակական մրցողներ են երեւում բնու-

(1) Մի քանի բառերի բացատրութիւնը հեղինակը մոռացել է աւել ներքեւ ծանուցումների տակ: Այդ բառերը ոչ միայն գործածական են հեղինակի բնակութեան միջավայրում, այլ եւ Ռուսաստանի շատ թրքաբանակ գաւառներին կից գիւղերում: Միայն համաձիւն եմ պ. Մանգլինեանի հետ այն գէպտում, երբ հեղինակը չէր կարող ուրիշ բառեր գործածել, քանի որ այդ տեսակ բառերի հայերէնը դեռ պակասում է մեղանում, իրողութիւնը, միտքը ամենաճիշտ կերպով բնութեցողին պատկերացնելու համար հեղինակը ստիպուած է եղել այդ բառերին դիմելու, սակայն ասել կուզէի, ջանք է հարկաւոր — որքան այդ հնարաւոր է — հայ գրականութիւնը գտելու օտար բառերից:

Թեան գողտրիկ պատկերաւոր նկարագրութիւններէ մէջ : Միայն « Լաւութեան որս » առաւելութիւնը նրա մէջն է, (կաշխատեմ մի առանձին անգամ ցոյց տալ, թէ « Լաւութեան որս » որքան բանաստեղծօրէն եւ գեղարուեստօրէն է արտայայտուած), որ նա ներկայացնում է մի ամբողջական շէնք լեռնային ժողովրդի կեանքի եւ բնութեան, իսկ « Լոռեցի Սաքօ »-ն, « Անոյշ »-ը եւ Շանթի « Լեռան աղջիկը » Խմբիկներ — Թուրքիկ, ոչ ամբողջացրած նկարագրութիւններ են նոյն կեանքի : Բուն վէպի պատմութեան հետ « Լաւութեան որս »-ում միանում են « Վարդան ու քոյ »-ը, « Աշուղի երգը », « Իգիթներ »-ը, « Բուդակով »-ը, « Լաւութեան », « Զիրիտ »-ը, « Մովիան »-ը (վարար անձրեւից գոյացած գետի մեծ տարափ), « Լաւութեան արտասուք »-ը, « Զանգիւլում »-ը, « Զրվէթ »-ը, « Ս. Սարգսի ուխտ »-ը, « Հարսանիք »-ը, « Սարի գիշեր »-ը, « Ամպերի ուրախութիւնը », « Երկնքի ու երկրի տարփանք »-ը — բոլորն էլ մի շարք գեղարուեստական պատկերներ, ներդաշնակաւորութեան տակ, լեռնային շքնաղ բնութեան, վրանաբնակ հայ ժողովրդի նահապետական կեանքի : Ձեռն կարող ուրանալ սակայն, որ « Լոռեցի Սաքօ », « Անոյշ », « Լեռան աղջիկը » եւ այլ բանաստեղծութիւններն էլ աղկեցութիւն ունեցել են « Լաւութեան որս » վրայ վերջաբանը նմանութիւն ենք գրտնում Պուշկինի « Յաւերժանար »-ի այն տեղին, որ երբ նրա հերոսը կրկին սկսում է թափառել լճի ափերին, անարգուած սէրից լճի մէջ խեղդուած ջրաղացպանի աղջիկը յանկարծ Յաւերժանար է դառնում եւ սկսում է խօսել սիրահարի հետ՝ միտքը բերելով նրան անցեալի յիշողութիւնները . . .

Ասում են, երբ որ ամպի փէշերը
Փռուեւելով սարեր, ձորերն են գրկում,
Լսվում է յանկարծ մըթին գիշերը
Մի խոր հասաւանք ժայռերի կըծքում .

Ու ամպերի մէջ Աւագ-որսկանը
Գայիտ է հըսկում իր աղջկանը .
Եւ նորից ծածկած նա վրշար ներսից՝
Փախչում է նամարտ մարդկանց երեսից . . .

Մի ուրիշ կողմից էլ նմանվում է Պուշկինի « Գնչուհի »-ին, միայն այն տարբերութեամբ՝ այնտեղ Պուշկինը նկարագրում է անապատային թափառական գնչուհիների կեանքը վրանների մէջ, իսկ Վ. Միրաքեանը երգում է նոյնպէս՝ հայ ժողովրդի վրանաբնակ կեանքը սարերում : Երկուսն էլ մէջէ մէջ տալիս են բնութեան նկարագրութիւններ, Եթէ պ. Միրաքեանի պօէման, զերծ լինի որեւէ բանաստեղծների մեղ գետ

անյայտ նմանութեան վերցրած կտորներէն , ամենայն վստահութեամբ կարող եմ ասել , իրաւունք ունի հայ դրականութիւնը պարձենալու , որ ունի մի այդպիսի ինքնուրոյն քանաստեղծ « է՛հ , ես էլ փնտեցի , թերթեցի , քրքրեցի . . . բայց թերութիւն չը գտայ » — ասում է Մանգինեանը : Բայց վարդը առանց փշերի չի լինում , սո՛ւման իր լաւ առանձնայատկութիւնների հետ ունի եւ իր պակասութիւնները : Նախ նրանում արտայայտուած չենք տեսնում խոր զգացմունքների վերլուծութիւն , հոգեկան աշխարհի մէջ կառարուող փոփոքկալից ալեկոծող եւ կրակոտ բռնկումներ , որ կարողանային բնթերցողի ամբողջապէս սիրտը գրկած՝ նեարգներին տիրել , չունի աւելի երեւակայութեան լայնաթոյր սաւառնումներ եւ որ զլխաւորն է , բովանդակութիւնը լինելով րոնտեսիկական , նրա միջից բացակայում են սիրոյ երդերի եւ ելեւէջների բարձր թռիչներ , երկրորդ՝ կարօյն չափից դուրս չատ է ուսցրած , մեծացրած գուրս բերուած Աւագ-որսկանի գիմաց , առաջինը իբրեւ « իգիթ » զոգութեան ու չարութեան , միւսը բարոյապէս հերոս վեհութեան եւ առաքինութեան , երրորդ՝ ինչո՞ւ խմբում դա՛նուած ակահատեաները յալիս են , իսկ ինքը Աւագ-որսկանը չէ արտառվում՝ իր աղջիկ Ալվարդի մահը տեսնելով , որին գնդակահար է անում այն աւագակ կարօյն հետ , գիշերը անտառում ձիով փախչելիս , որը յանդգնութիւն ունեցաւ դաւաճանութեամբ հին աղուհացի կիճորելով եւ իգիթին անվայել օրէնքն ու կարգն ոտնաճարելով՝ նրա հարազատին փախցնելով՝ գաղտնի սիրոյ պայմանով . . . Չորրորդ՝ ինչո՞ւ հեղինակը խոյս է տուել հոգեբանական տանջանքների վերարտադրելուց իր հերոսի ներքին աշխարհում , մի՞թէ խղճի խայթը չէր տանջում նրան զէպի հարազատի սպանութեան գործը , չէ՞ որ նա մարդասիրական զգացմունքների տիպար է եւ ներող անգամ թշնամիներին , հեղինակի ցոյց տալով :

« Նա վրդասան է բառիս բուն նշանակութեամբ , ամենաեղբարական կտորները նա այնպէս հանդիստ հանդարտ պատմում է , որ Հոմերին յատուկ է » . . . Դա արդէն չափազանցութիւն է , պ . Մանգինեան , դրաւ նով կարող էք փնտս բերել եւ « երեւակայող » դարձնել հեղինակին : Ո՞ւր Հոմերոս , ո՞ւր Միրափեան , որպիսի՞ համեմատութիւն , մէջ աեղը աճաղին անչափելի տարածութիւններ կան տարբերութեան : Ի զուր էք գուրս դալիս չափաւորութեան սահմանից . . . Պատմելու ձեւը յիշ նման է Օսսիանի ոճին , Ընդհակառակը պ . Միրափեանի պատմելու թելատ եւ գանդաղ ձեւը ընդմիջումներով աւելի է թուլացնում ներգործած ապաւորութիւնը եւ տեղ տեղ շատախօսութեան ձեւ ընդունած կողմնակի դրուագների ու միջադէպերի նկարագրութեան մանրամասնութիւնները աւելի են խանգարում ու ցրում ու չաղրութեան լարումը : Այդ ձգձգումներն են աւելի աններդաշնակութիւն ձգում սիրուն պատկերներին մէջ : (1)

(1) Օրինակ , աւելի բնդարձակ աեղ է տուած բուղակուին , քան

Ձը նայելով մի քանի թերութիւններին, պէտք է խոստովանել, « Լաւուարի որսը » մի գեղեցիկ բացառութեամբ նշանաւոր է մանաւանդ բնութեան նկարագրած յաջող պատկերներով : Բանասէր չի ընթերցողներին ուղենալով զաղափար տալ պ. Միրաքեանի բանաստեղծական տաղանդի մասին, առաջ եմ բերում այստեղ համառոտակի մի-երկու կտորներ սարի տեսարանների նկարագրութիւններից .

Ծաղում է մանուկ արեւը զարնան
Կովկաս լեռների ձիւնի պատնէշից .
Ջարթում են մէկ-մէկ սարերն աննման
Ձմրան անլրդով քնի մըշուշից :

Ահա՛ Լաւուարի վիթխարի ուսին
Բազմում է արփին թարմացած ոյժով .
Սարեր ու ձորեր իրար նրեսին
Նայում են ժպտում ամպի մշուշով ... Եւայլն .

կամ վերցնենք սարի գիշերը .

Իւր սուր ծերպերով անեղ ցիրուցան
Լեռներն են բազմած բնութեան արձան ,
Ուր թուխ ամպերն են գունդագունդ գինովում
Փայլակ-կայծակով իրար հետ կըռվում
Ջարներով միմեանց նրկիւր ու եթեր ,
Թռչկոտում են հուր կայծակի շանթեր .
Խաղում են դոռում ճայթիւն որոտով ,
Ծեծում լեռներին , ծաղրում կարկուտով ,
Այնտեղ գիշերուայ խաւարի միջին
Մի խարոյկ վառուեց Լաւուարի լանջին ... Եւայլն .

կամ վերցնենք մի ուրիշ կտոր .

Ուր ասուակները մանուկ կարկաչով
Դիմում են ձորեր , լըցնում հառաչով ,

բուն գէպքի իրողութեան : Աւելի ձգձգուած են եղել լուղմակի նկարագրութիւնները, միայն հեղինակը սխմել կարճացրել է ուրիշների խորհուրդով, որոնց ցոյց տուած է ձեռագիրը : Հրատարակչական ընկերութիւնը չը հրատարակեց, իսկ «Մուրճ»ը ընդունեց՝ միջից հանելով Նախերգանքը, որ կազմելիս է եղել պօէմայի կիսու չափ : Այժմ լսում ենք հեղինակը պատրաստում է այդ Նախերգանքից մի ուրիշ պօէմա :

ժայռերից ժայռեր թափ առած, ոյժով,
 Թընդինն որոտով փրփրում է ջրովէժ
 Մըռութը կիտած հին ապառաժով
 Զարգուելով անյոյս, երգում է վըրէժ .
 Ուր զեփիւռ մեղմիկ ցըրուելով բոյրը ,
 Սուզում է սիրաւ վայելքի ծովում ,
 Իսկ թարմ շուրթերի կոյսի համբոյրը
 Մաղիկների հետ անմեղ բարեւում . . . եւայլն

Այս կտորները՝ իբրեւ վկայութիւն, շատ լաւ բնորոշում են պ-
 Միրաքեանի ստեղծագործող ոյժի եւ կարողութեան չափը: Դրանք կար-
 ծես յիշեցնում են Յովհ. Թումանեանի պօէմաների բոյրը եւ թարմու-
 թիւնը: Ճառում ենք միայն, որ պ-Թումանեանը վերջին ժամանակները
 շատ տափակ եւ թոյլ բաներ է տալիս: Խորհուրդ կը տայի ընթերցող-
 ներին ձեռք բերել կարդալու « Լալուարի ուսը »: յուսալով որ անշուշտ
 օգուտ կունենան: Այնտեղ կը տեսնեն մի վիպական բանաստեղծ, լեռան
 մի շնորհայի երգիչ, որը մեր առաջ քաց է անում գեղեցկութեան մի
 նոր աշխարհ, մի նոր ետուն կեանք — սարի կեանքը իր բոլոր խաւե-
 րով, լեռնային բնութիւն իր բազմադան հրաշալի տեսարանների լու-
 սաբանութիւններով, ուր զովարար աղբիւրները կտորում են ծարաւի
 պապակը եւ ցօղն ու շաղը իրար խոնուած մի անուշիկ կենսաբոյրով
 մարդու հոգին ու սիրտը գիւթում, հմայում են, ուր վերջապէս բա-
 նաստեղծը, իսկական պօէզիայի ազդեցութեան տակ, տանում է մեզ
 դէպի պարզ բնութեան մեծարանքները ամբոսական խոտ ու ծաղկի մէջ,
 ուր թարմանալով կեանքը՝ կարծես մանկութիւնը վերածնվում է: « Տայ
 Աստուած . որ յոյսերը մեզ չը խաբեն » ակնարկում է պ- Մանգինեանը
 մի տեղ յօդուածում: Լաւ ճանաչելով հեղինակին, չեմ կարող թագցնել,
 որ ինձ փոքր ինչ նախապաշարուած եմ զղում, որովհետեւ կեանքի այն-
 պիսի աննպաստ պայմաններումն է պարփակուած, որ նա գծուար թէ
 կարողանայ իրագործել գեղեցիկ դրաւականները ակնկալած յոյսերի . . .

Եթէ պ- Միրաքեանը, իրօք, ցանկանում է օգտակար հանդիսա-
 նալ իր հայրենի գրականութեանը՝ իբրեւ բանաստեղծական ճիւղի բար-
 դաւաճման ու զարգացման մտաւոր աշխատող նախանձախնդիրներից մէ-
 կը, թո՛ղ միանգամայն հեռանայ ուսուցչական ասպարէզից, ուր նա
 մաշում է թոքերը, որ մանուկների ամենօրեայ շարունակուող դժվոճե-
 ներից խանդարվում ընդհատվում է ստեղծագործութեան թելը եւ ոգեւո-
 բութեան լարած թելը կտրատվում: Թո՛ղ առանձնապէս նու իրէ անձը՝
 գրուելով անկեղծ դիւետոր գրականութեան: Ճառելով պիտի ասեմ, որ
 նա պ. Յ. Յովհաննիսեանի նման շատ ծոյլ է եւ արտադրելու մէջ շատ
 դանդաղ: Վանեցէք Զեւնից այդ ծուլութիւնը, սիրելի՛ հայրենակից,

աշխատեցէք և Լալուարի որսի ո նման համով-հոտով պօղմաներ տալ։ Այն ժամանակ, հաւատացած եղէք, պատուաւոր տեղ էք բռնելու մեր նաւապետին գրականութեան գաւառում։

Միայն անկեղծ հաւատ եւ տոկոսն աշխատանք։ միշտ առաջ եւ առաջ, եւ բարձրի՛ն դիմելու։

Յաջորդ յօդուածը կը նուիրեմ պ. Յարութիւն Թումանեանի բանաստեղծութիւններին։

Շուշանէր։

Գրիգոր Բաղասանեան



ԱՅԽԱՐՀԻՍ ՀՆԱԳՈՅՆ ՕՐԻՆԱԳԻՐՔԸ

Այս է տիտղոսը վերջերս Անգլիոյ մէջ լոյս տեսած այն մէկ գրքին, որ Թարգմանութիւնն է բաբելական նորագիւտ այլ հնագոյն արձանագրութեան մը։ Այդ գրքին վրայ հմտալից տեսութիւն մը կերեւար Րըվիւ օվ Րըվիւզ անուն հանգէսին մայիսի համարին մէջ։ Այդ տեսութիւնը կարգալէ ետք, կարգացինք նաեւ բուն գիրքը, եւ ուղեցինք Բանասերի պատ. ընթերցողներուն ծանօթացնել ոչ այնքան զիրքը որքան քննադատական յօդուածը։ Այդ երկար յօդուածը Թարգմանելու մեզ հրապուրողը սա միակ կէտն էր. —

Թէ՛ կիներ ի՞նչ դիրք ունեն, ի՞նչ վիճակի մեջ կը գտնուեն, ի՞նչպէս կը վարուէին ներս հետ Քրիստոսե 23 դարեր առաջ։

Գոնէ՛ փոքրիկ դադափար մը պիտի կարենայ կազմել յետագայ հասունածին ընթերցողը։

Այս հատուածէն պիտի օգտուինք պատրաստութեան ժամանակ մեր մէկ ընդարձակ յօդուածին, նկատմամբ կնոջ, զոր պիտի հրատարակենք ուրիշ հանգէսի մը մէջ. ու թերեւս մինչեւ այս Թարգմանութեան լոյս տեսնելը բուն մեր գրութիւնն ալ երեւցած ըլլայ։ (1)

• • •

(1) Ակնարկուած յօդուածն հրատարակուելու վրայ է Արտեմիսի մէջ։